



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2016 թվականի N 865 - Ա

1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱԴԻԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՈՒՆԱ-
ԳԱՂԹԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Մոլդովական 70 հասցեում գտնվող հանրակացարանային թիվ 1 մասնաշենքում, Երևան քաղաքի Վարդաշենի 6-րդ փողոցի 66/1 և Երևան քաղաքի Շիրակի 2ա/7 հասցեներում գտնվող հանրակացարաններում բնակվող՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապե-

տության քաղաքացիություն ստացած անձանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված կարգով սեփականաշնորհել իրենց կողմից զբաղեցված բնակելի տարածքները՝ համաձայն հավելվածի, սեփականության իրավունքով կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, հավասար բաժիններով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հանրակացարանների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ գույքի (հողամասերի և ընդհանուր օգտագործման տարածքների) նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով անցնում է հանրակացարանների առանձին տարածքների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողներին:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց և սեփականաշնորհվող բնակելի տարածքները որպես առանձին գույքային միավոր առանձնացնելուց հետո վեցամսյա ժամկետում՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տարածքների սեփականաշնորհումը ու բնակիչների հետ կնքել նվիրատվության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման նվիրատու բնակիչների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. օգոստոսի 26
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ց Ա Ն Կ

1988-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՈՆԱԳԱՂԹԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԶԲԱՂԵՑՎԱԾ՝ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Անձնագրային տվյալները	Սեփականաշնորհման ենթակա բնակարանների գտնվելու վայրը, սենյակների թիվը	Հատկացմա ն տարեթիվը	Բնակարան ի մակերեսը (քառ.մ)	Հաշվեկշռայի ն արժեքը (դրամ) (01.01.2016 թ. դրությամբ)	Սեփականությ ան իրավունքով կամ ընդհանուր բաժնային սեփականությա ն իրավունքով տրվող
1	2	3	4	5	6	7	8
1.	Սարկիսյան Ամժելա Հրանտի Սարկիսյան Թամարա Հովհաննեսի	AF0411890, տրվ.՝ 04.07.2002 թ., 009-ի կողմից, ծնվ.՝ 18.02.1970 թ. AN0630259, տրվ.՝ 26.08.2013 թ.,	քաղ. Երևան, Վարդաշենի 6- րդ փողոցի 66/1 հասցեում գտնվող հանրակացարանի թիվ 415 բնակարան	2002 թ.	41.4	123524.35	ընդհանուր բաժնային սեփականությ ան իրավունքով՝ հավասար բաժիններով

1	2	3	4	5	6	7	8
		009-ի կողմից, ծնվ.՝ 08.08.1997 թ.					
2.	Մկրտիչևա Ռիմնա Գրիգորիի	007047756, տրվ.՝ 24.08.2015 թ., 099-ի կողմից, ծնվ.՝ 06.07.1940 թ.	քաղ. Երևան, Մոլդովական 70 հասցեում գտնվող հանրակացարանային թիվ 1 մասնաշենքի թիվ 630 սենյակ	2011 թ.	16.7	57463.70	սեփականության ն իրավունքով
3.	Մարտիրոսյան Էլվիրա Սերգեյի Շումովիչ Ալեքսանդրա Ալեքսանդրի	AN0418020, տրվ.՝ 21.03.2013 թ., 003-ի կողմից, ծնվ.՝ 07.08.1963 թ. ծնվ.՝ 27.10.2001 թ.	քաղ. Երևան, Շիրակի 2ա /7 հասցեում գտնվող հանրա- կացարանի թիվ 719 սենյակ	2007 թ.	17.1	41645.17	ընդհանուր բաժնային սեփականությ ան իրավունքով՝ հավասար բաժիններով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ